Համագործակցության հուշագիր

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի և Կորնելի Կեկելիձեի անվան Վրաստանի ձեռագրերի ազգային կենտրոնի միջև

Սույն հուշագիրը համագործակցության համաձայնագիր է Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի և Կորնելի Կեկելիձեի անվան Վրաստանի ձեռագրերի ազգային կենտրոնի միջև:

Հուշագիրը կողմերին իրավական պարտավորություններ չի պարտադրում. այն միայն սահմանում է կողմերի կամքը՝ փոխգործակցություն հաստատելու և նրանց միջև փոխադարձ արդյունավետ համագործակցությունը խթանելու համար:

Հաշվի առնելով երկու երկրների միջև սերտ կապերը մշակութային և գիտական համագործակցության, ինչպես նաև ձեռագրերի ուսումնասիրման ոլորտում, մասնագիտական համագործակցության վրա հիմնված ընդհանուր հետաքրքրություններն ու արդյունքները՝ Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտը և Կորնելի Կեկելիձեի անվան Վրաստանի ձեռագրերի ազգային կենտրոնը, այսուհետ «Կողմեր», համաձայնում են հետևյալի վերաբերյալ.

Հոդված 1

Զարգացնել բազմակողմանի համագործակցություն՝ ներառյալ մասնագիտական փորձի և տեղեկատվության փոխանակում պատմության, բանասիրության և արևելագիտության բնագավառներում:

Հոդված 2

Զարգացնել գիտական համագործակցությունը՝ ներառյալ գիտական հանդիպումների, գիտաժողովների և սեմինարների կազմակերպումը և մասնակցությունը:

Հոդված 3

Նյութերի և փաստաթղթերի որոնման և տեղեկատվության փոխանակման համար,քաղաքացիական իրավունքի համաձայնագրերի շրջանակներում, նպատակ ունենալով հարստացնել համապատասխան գիտական ֆոնդերն ու հավաքածուները, մատակարարել ձեռագրերի, վաղ շրջանի տպագիր գրքերի, պատմական փաստաթղթերի և արխիվային նյութերի թվային պատճեններ, որոնք արժեքավոր նշանակություն ունեն արևելագիտական, կովկասագիտական, հայագիտական և քարթվելագիտական ուսումնասիրությունների համար: Եթե մի կողմը որոշում կայացնի տեղեկատվությունը կիսել մեկ այլ (երրորդ) կողմի հետ, ապա նա պետք է մյուս կողմին գրավոր տեղեկացնի սույն որոշման մասին:

Հոդված 4

Քաղաքացիական իրավունքի համաձայնագրերի հիման վրա համագործակցել հնագիտության, մատենագրության և թվային հումանիտար գիտությունների բնագավառներում՝ նպատակ ունենալով ուսումնասիրել, պահպանել և թվայնացնել արևելագիտական ձեռագրերը, վաղ շրջանի տպագիր գրքերը և արխիվային նյութերը:

Հոդված 5

Լրացուցիչ պայմանավորվածությունների հիման վրա, Կողմերը համաձայնում են համատեղ հրատարակել փաստաթղթերի ժողովածուներ, կատարել գիտնականների և փորձագետների փոխանակում՝ նպատակ ունենալով իրականացնել պատմական, մշակութային այդ թվում նաև արևելագիտական հետազոտություններ, և կիսել իրենց փորձը պատմագիտության, բանասիրության, արևելագիտության, հայագիտության և քարթվելագիտության բնագավառներում:

Հոդված 6

Սույն հուշագիրը փոխադարձ համաձայնությամբ կարող է ընդլայնվել կամ սահմանափակվել:

Հոդված 7

Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և ուժի մեջ է մնում հինգ (5) տարի: Հուշագրի գործողությունն ավտոմատ կերպով կերկարաձգվի հաջորդ ժամանակահատվածի համար, քանի դեռ կողմերից մեկը մյուսին չի ծանուցել դրա դադարեցման կամ փոփոխման մասին առնվազն երեք (3) ամիս շուտ:

Հուշագիրը ստորագրվում է Երևանում 2021 թվականի հունիսի ..... 6 օրինակով (երկու օրինակ վրացերեն, երկու օրինակ հայերեն և երկու օրինակ անգլերեն): Պատճեններից յուրաքանչյուրն ունի հավասար իրավաբանական արժեք: Տեքստի ընթերցանության մեջ թյուրըմբռնման դեպքում առաջնային կլինի անգլերեն տարբերակը:

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտ	Կորնելի Կեկելիձեի անվան Վրաստանի Ձեռագրերի ազգային կենտրոն
Տնօրեն	Տնօրեն
Ռոբերտ Ղազարյան	**Զաալ Աբաշիձե**